

Հայ-ռուսական համալսարանը հայտարարում է հայոց լեզվի ուսուցման դասընթացների կազմակերպման մասին: Բոլոր նրանք, որոնք չեն տիրապետում հայերենին, սակայն ցանկանում են սովորել հայերեն՝ սկսած զրոյական մակարդակից և կամ բարելավել իրենց՝ հայերենից լեզվական իմացությունը, կարող են դիմել մասնակցելու այս դասընթացին: Կախված դիմողի լեզվիմացության մակարդակից՝ դասընթացը կիրականացվի անհրաժեշտ և համապատասխան փուլից:

Ուսուցումը լինելու է երկու տարբեր մեթոդներով՝ համեմատական-գուգադրական և ինտենսիվ: Միջնորդ լեզուն ռուսերենն է: Երկու դեպքում էլ առաջնահերթություն է սովորողի հաղորդակցային կարողությունների զարգացումը և շփումների լեզվին տիրապետելը: Ուսուցման դասընթացներն ավարտելուց հետո Դուք կտիրապետեք հետևյալ կարողություններին և հմտություններին.

Российско-Армянский (Славянский) университет объявляет об открытии курсов по армянскому языку. Мы предлагаем курсы армянского языка для всех желающих изучать армянский язык с «нуля» или совершенствовать свои языковые навыки. В зависимости от уровня владения языком мы предлагаем различные варианты (обыкновенные и интенсивные курсы). Обучение ведется по методикам, основанным на коммуникативном принципе преподавания. По завершении курсов Вы овладеете следующими компетенциями:

Հասկացու- թյուններ	<i>Նախնական կամ «գոյատևման» մակարդակ՝ A1</i>	<i>Մինչեզեմային մակարդակ՝ A2</i>	<i>Շեմային՝ B1</i>	<i>Ետշեմային մակարդակ՝ B2</i>	<i>Լեզվի գործ- նական և ար- դյունավետ տի- րապետման մակարդակ C 1</i>
Զայնագր.	Դանդաղ և պարզ խոսքի դեպքում	Եթե հնչում է դանդաղ, հստակ արտասանու-	Առանց դժվարու- թյան հասկանում է	Կարող է հասկա- նալ ինչպես վերա-	Կարող է հասկանալ,

<p>ունկնդրում</p>	<p>կարող է ըմբռնել իմաստը, հասկանալ իրեն ուղղված պարզ հարցերն ու առաջադրանքները, սովորած բառերի սահմաններում պատմել լսածը</p>	<p>թյամբ միտք, ապա ունկնդիրը հասկանում է ասվածը, մանավանդ, եթե դա իր շրջապատին, ընտանիքին կամ ուսումնական թեմաներին է վերաբերում, կարող է հասկանալ առօրյա հարցերին վերաբերող տեղեկատվությունը (եղանակ, երթուղիներ, սպասվող հանդիպում...)</p>	<p>հաճախակի հանդիպող գովազդը, ստանդարտ մշակված ելույթները և տեղեկատվությունը, լեզվակիրների գրույցը լսելիս կարող է առանց դժվարության հետևել ծավալվող քննարկմանը, որպես ունկնդիր հետևել ծանոթ թեմաներով գրույցներին, դասախոսություններին, կարող է հասկանալ պարզ տեխնիկական տեղեկատվությունը</p>	<p>ցական, այնպես էլ թանձրացական թեմաներով, լեզվական առումով որոշակի բարդություն ունեցող ելույթները, գրույցները, ծավալուն ելույթին գուցահեռ հետևել ցուցադրական նյութին, եթե լեզվակիրները նրան ներգրավեն իրենց գրույցի մեջ, կարող է մասնակցել, թեև խոսքը կարող է փոքր-ինչ դանդաղ լինել</p>	<p>զգալ և տարբերել լեզվակիրների արագ հընչող և արտասանական տարբեր բանաբաններ ունեցող գրույցը, պատմությունը, առօրյա շփումներում մասնակցել դրանց</p>
<p>Ընթերցող. կարողություններ</p>	<p>ա/տեսողական ըմբռնում կարդում և ըմբռնում է փոքրիկ տեքստերը, բացիկների իմաստը, կողմնորոշիչ ընթերցման ժամանակ հասկանում ցուցափեղկերի, գովազդային վահանակների իմաստը բ/տեսալսողական ըմբռնում ուրշի բարձրաձայն ընթերցման ըմբռնում, նույն</p>	<p>ա/տեսողական ըմբռնում կարող է կարդալ և հասկանալ ոչ ծավալուն տեքստերը՝ գրված մատչելի, հաճախ հանդիպող բառապաշարով կամ միջազգային տարածում ունեցող եզրույթներով ու բառերով, կարող է հասկանալ ստանդարտ նամակները (հայտ, հայց, հրաման, որոշում, վավերացում և այլն), կարող է օգտվել թեր-</p>	<p>ա/տեսողական ըմբռնում կարող է կարդալ և բավարար չափով ըմբռնել իր հետաքրքրության շրջանակներում եղած փաստական նյութը, անձնական նամակներում կարող է կարդալ և հասկանալ դեպքերի նկարագրությունը, արտահայտված զգացմունքները, հույզերը, ըմբռնել</p>	<p>ա/տեսողական ըմբռնում կարող է ազատ և սահուն կարդալ տարբեր բարդության և բովանդակության տեքստեր՝ հարմարեցնելով կարդալու ոճը, արագությունը, նակ կարող է փնտրել, ընտրել և ձեռք բերել անհրաժեշտ մեջբերումը, աղբյուրները, ունի ընթերցանության</p>	<p>ա/տեսողական ըմբռնում ցանկացած տեքստ կարդում է՝ 1.բարձրաձայն սահուն, ճիշտ հնչերանգով, 2. մտքում՝ հստակ տեսնելով բոլոր բառերը, արտահայտած մտքերի նրբե-</p>

	<p>ֆիլմի կրկնակի (անգամ եռակի) դիտումից հետո ըմբռնում</p>	<p>թերից, տեղեկատվական բրոշյուրներից բ/տեսալսողական ըմբռնում կարող է հասկանալ հեռուստատեսությամբ տրվող որոշ հաղորդումներ, ժամանցային ծրագրեր, կինոնկարներ. (դարձյալ 2-րդ, 3-րդ դիտումով)</p>	<p>ցանկությունները, կարող է հասկանալ կարդացած հոդվածի կարևոր կետերը, օգտվել համացանցից, դրա էլեկտրոնային գրադարանից բ/տեսալսողական ըմբռնում կարող է հասկանալ հեռուստատեսությամբ կամ համացանցով տրվող լրատվությունը, եղանակի, մարզական կյանքի մասին նյութերը, նաև ֆիլմերը, թոք-շոունները</p>	<p>մեծ բառապաշար, կարող է աչքի անցկացնել երկար տեքստերը անհրաժեշտ տեղեկատվությունը գտնելու համար, իր ուսումնական կամ մասնագիտական ոլորտին վերաբերող հարցերի շուրջ կարող է տեղեկատվություն և փաստեր ձեռք բերել, հավաքել կարծիքներ ու տեսակետներ մասնագիտական գրականությունից բ/տեսալսողական ըմբռնում օգտվելով բոլոր տիպի նշաններից ու գրություններից անսխալ կարող է կողմնորոշվել անձանթ վայրում, դիտել հեռուստատեսային գրեթե բոլոր հաղորդումները, ինչպես նաև արվեստին նվիրված ելույթներն ու բանավեճերը, կինոնկարները</p>	<p>բանգները, չի շփոթում առանձին բառի կամ տառի տեղը, կարողանում է նորածանոթ բառը հասկանալ կռահելով, լեզվամտածողությունը կարողանում է հեշտությամբ մի լեզվամիջավայրից տեղափոխվել այլ լեզվամիջավայր շնորհիվ հարուստ բառապաշարի, քերականական ճիշտ ձևերի կիրառության և փորձի բ/տեսալսողական ըմբռնում կարողանում է հասկանալ բոլոր ֆիլմերը (հանդիպող բոլոր անձանոթ բառերն ու դարձ-</p>
--	---	---	--	--	---

						վածքները հասկանում է կռահումով) և կարող է մասնակցել բոլոր տիպի հեռուստատեսային և այլ մեդիա ծրագրերի
Խ Ո Ա Ո Ղ Ո Լ Թ Յ Ն Լ Ն	Երկխոսություններ	Կարող է մասնակցել ընկերների հետ արդեն սովորած՝ հեշտ բառերով երկխոսություններին, տալ հարցեր ու պատասխանել իրեն տրված պարզ և դանդաղ ասված հարցերին	Մասնակցում է իր շրջապատում եղող զրույցին կամ երկխոսությանը, որոնց թեման արդեն հայտնի դեպք է, իր շրջապատի, ընկերների, դասերի կամ աշխատանքի, տրանսպորտի, առևտրի մասին նյութ, կարող է կատարել որոշակի տեղեկատվության փոխանակում, օգտվել առօրյայում անհրաժեշտ ծառայություններից (գրադարան, գնումներ, կենցաղային խընդիրների լուծում, սարքերի նորոգում և այլն)	Կարող է ներկայացնել աշխատանքային գործունեության նպատակը, պատասխանել առաջադրվող հարցերին, ակտիվ կերպով մասնակցում է երկխոսություններին, պատճառաբանություններին տալիս բացատրություններ, դժվարությամբ, բայց կարողանում է հանպատրաստից պատասխանել հարցերին	Կարող է սահուն, անկաշկանդ, առանց որևէ կողմի անհարմարություն ստեղծելու շփվել, հարաբերվել մարդկանց հետ, հասկանում է բոլոր նորմալ արագությամբ ասված տեքստերը, զրույցի կամ երկխոսության ժամանակ կարող է շեշտել անձնական կարևորության դեպքը, փորձը, պաշտպանել սեփական տեսակետը բերելով համապատասխան փաստեր և տալով բացատրություններ	Կարող է մասնակցել տարաբնույթ բանավեճերի, քաղաքական դեբատների, զրույցել արվեստից, գրականությունից, իր մասնագիտության մասին

	Մենախոսություններ	Կարող է նկարագրել որևէ փորձ, դեպք, պատմել իր կամ մեկ այլ մարդու մասին, նկարագրել նրան, ասել բաժակաճառ, անել հայտարարություն	Կարող է նկարագրել անսպասելի դեպքերը, իրադարձությունները, առանց միջամտության պատմել իր կարդացած հոդվածը, պատմվածքը, կարծիք հայտնել կատարվածի կամ կարդացածի մասին	Նախապես պատաստվելու դեպքում կարող է ներկայացնել ծավալուն մենախոսություն՝ ամենատարբեր թեմաներով	Կարող է մանրամասն ներկայացնել հետաքրքրող թեման, ծավալվել, ասել իր մտքերը, բերել դրանք հաստատող օրինակներ, տալ գնահատական, բացատրել իր մտեցումը, կատակել, հումոր անել (եթե իհարկե, իր բնույթով սրամիտ է)	Կարող է կարդալ իր մասնագիտության թեմաներով դասախոսություններ, ներկայացնել գիտական ելույթներ
Գրավոր խոսք	Կարող է գրել պարզ, արտահայտություններ, անկախ նախադասություններ, իր անուն, ազգանունը, հստակ թելադրված բառեր, բառակապակցություններ, ինքնուրույն գրել և պատմել իր մասին, լրացնել ոչ ծավալուն անձնական թերթիկ	Ինքնուրույն կարող է գրել փոքրիկ տեքստեր, դիմում, բացատրագիր, ինչ-որ բանի մասին տալ վերլուծություն՝ նկարագրություն, կարող է գրել անձնական նամակներ, գրել շնորհավորանք կամ շնորհակալական խոսք	Կարող է գրել կարճ հաշվետվություններ, հաղորդումով փոխանցել ինչպես վերացական, այնպես էլ իրական դեպքերին ու թեմաներին վերաբերող ճշգրիտ տեղեկություն՝ տալով պարզաբանումներ, նաև հարցերը ճիշտ ձևակերպելով	Կարող է իր մասնագիտությանը վերավերող թեմաներով պարզ, նաև մանրամասնելով տեքստեր գրել՝ զուգադրելով և գնահատելով տարբեր աղբյուրներից քաղած տեղեկատվությունն ու փաստերը, տալ այս կամ այն հասկացության միջև եղած կապը, կարող է գրել տեսած կինոնկարի կամ կարդացած գրքի մասին	Գրել գիտական հոդվածներ, անել գրական փորձեր, պատասխանել զանազան նամակների, բողոք-հայցերի, տալ լրացուցիչ բացատրություններ	

Մակարդա կը	Ժամաքանակը			Ժամկետները		Դասընթացի արժեքը		
	Դասընթացի ժամերը	Շաբաթական		Սովորա- կան	ինտենսիվ	Անհատական	4 սովորող.	8 սովորող
		սովորա կան	ինտենսիվ					
A1	50 ժամ	6 ամ	12 ժամ	2 ամիս	1 ամիս	100.000	84.000	70.000
A2	108	6	12	4,5	2,5	220.000	124.000	80.000
B1	216	6	12	9	4,5	360.000	180.000	120.000
B2	216	6	12	9	4,5	360.000	180.000	120.000
C1	108	6	12	4,5	2,5	200.000	120.000	90.000